



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

С 442. «ЕРИНТ»

Издательство «ЕРИНТ»

под редакцией [неясно]

4467

С Р Ц Ф Р Р

ИЗДАТЕЛЬСТВО «ЕРИНТ»
ИЗДАТЕЛЬСТВО

1931
Р. 1210

ИЗДАТЕЛЬСТВО «ЕРИНТ»

ИЗДАТЕЛЬСТВО «ЕРИНТ»
(ТРЕТ. ИИТ.)

ПОД РЕДАКЦИЕЙ [неясно]

Издательство «ЕРИНТ»

ПРОГРАММА

ной Коммунистической
Партии

ЗКП
12-11

1931
Т. 1210

17 SEP 2019

ՀՐԱՏԱՐԱԿԳ. «ԵՐԻՆՏ» 11 JUL 2005

Խմբագրությանը [redacted]

1 DEC 2009

Չորեքշաբթի րոպե երկրորդի, միացե՛ք.

ՅՈՒՆ

ՈՒՆ

Մ

Օ Ր Ս Փ Ի Ր

ՌՈՒՍՍՅԱՆԻ ՎՈՍՏԱՆԻՍՏՆԱԿՆ
ՎՈՒՍՎՅՈՒԹՅԱՆ

13993-57

1921

«ԻՓԻ»

ИЗДАТЕЛЬСТВО «ЕРИНТ»

(ТРЕТ. ИНТ.)

ПОД РЕДАКЦИЕЙ [redacted]

Пролетария всех стран, соединитесь.

ПРОГРАММА

Российской Коммунистической
Партии



1921
Тифлис

**ՄՐԱԳԻՐ ԲՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒ-
ՆԻՍՏԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը
(25 հոկտ. / 7 նոյեմբ. 1917 թ.)
Ռուսաստանում իրականացրեց պրո-
լետարիատի ղեկաւարտան, որով
պրոլետարիատը ազգաւ գեղացու-
թեան կամ կիսապրոլետար տարրերի
օգնութեամբ ձեռք զարկեց ստեղծա-
գործելու կոմմունիստական հասարա-
կութեան հիմունքները: Յեղափոխու-
թեան զարգացման ընթացքը Գերմա-
նիայում և Աւստրո Հունգարիայում,
բոլոր առաջաւոր երկրների պրոլե-
տարիատի յեղափոխական շարժման
անուամբ, այդ շարժման Սորհրդային
ձևի տարածումը, որը ձգտումն ունի
անմիջական կերպով իրականացնելու
պրոլետարիատի ղեկաւարտան, — այս
ամենը ապացուցեցին, որ սկսել է
պրոլետարական, կոմմունիստական
համաշխարհային յեղափոխութեան
զարեղջանը:

Այդ յեղափոխութիւնը անխուսա-
փելի հետեանքն է կապիտալիզմի զար-
գացման, որ առայժմ տիրապետող է

քաղաքակրթւած երկրների մեծ մասում: Կապիտալիզմի և բուրժուական հասարակութեան բնոյթը մեր հին ծրագիրը ձիշտ է բնորոշել հետեւեալ ձևով, եթէ միայն հաշի չառնենք կուսակցութեանը տրւած սոցիալ-դեմոկրատական անձիշտ անունը:

«Այդպիսի հասարակութեան զբաղումը առանձնաշատ կութիւնն է ապրանքային արտադրութիւնը, հիմնւած կապիտալիստական արտադրական այն յարաբերութիւնների վերայ, երբ արտադրութեան միջոցների և ապրանքների շրջանառութեան կարևորագոյն և ամենագլխաւոր մասը պատկանում է սահմանափակ թւով մարդկանց, մինչդեռ օգտաբերակութեան մեծագոյն մասը բաղկացած է պրոլետարներից ու կիսապրոլետարներից, որոնք՝ իրանց տնտեսական վիճակից հարկադրւած՝ մշտապէս կամ պարբերաբար վաճառել են իրանց բանւորական ոյժը, այսինքն հարկադրւած են կապիտալիստների վարձկանները դառնալ և իրանց աշխատանքով ստեղծել հասարակութեան վերին դասակարգերի եկամուտը:

«Կապիտալիստական արտադրական յարաբերութիւնների տիրակալութեան շրջանն աւելի և աւելի է լայնանում, տեխնիկայի կատարելագործման հետ միասին, բարձրացը-

նելով խոշոր ձեռնարկութիւնների տնտեսական նշանակութիւնը, դուրս մղելով ինքնուրոյն մանր արտադրողներին, վերջիններիս մի մասին դարձնում պրոլետար և մնացածների ղեկը սոցիալ-տնտեսական կեանքի մէջ սահմանափակելով, տեղ-տեղ էլ դնում աւել կամ պակաս չափով լիակատար, աւել կամ պակաս տկայ, աւել կամ պակաս ծանր կախման մէջ կապիտալից:

«Եւայց նոյն այս տեխնիկայիւն է կան յատաճադիմութիւնը հնարատալիս ձեռնարկողներին ապրանքների արտադրութեան և շրջանառութեան պրոցեսում աւելի ևս մեծ չափերով գործադրել կանանց և երեխաների աշխատանքը: Եւ որովհետեւ միւս կողմից՝ տեխնիկայի նոյն յառաջադիմութիւնը ձեռնարկողների ունեցած բանւորական կենդանի աշխատանքի կարիքը յարաբերաբար նւազեցնում է, ուստի, բնական է, որ բանւորական ոյժի պահանջի չափը պակաս լինի, քան առաջարկը. այդ պատճառով մեծանում է վարձու աշխատանքի կախումը կապիտալից և բարձրացնում նրա շահագործման տուտիճանը:

«Իրերի նման կացութիւնը բուրժուական երկրների ներսում և նրանց շարունակ սրւող փոխադարձ մրցումը

համաշխարհային շուկայում՝ աւելի և աւելի դժւարացնում են յարաճուն քանակութեամբ արտադրուող ապրանքների վաճառումը: Բուրժուական հասարակութեան արտադրողական ոյժերի զարգացման անխուսափելի հետևանքը դերարտադրութիւնն է, որ արտայայտում է աւել կամ նւազ տեականութիւն ունեցող արդիւնադործական ճղնաժամերի և լծացման շրջանների մէջ: Կրիգիւնները և արդիւնագործութեան անշարժութեան շրջանները իրանց հերթին աւելի ևս սնանկացնում են մանր սրտազրոյցներին, աւելի ևս ուժեղացնում վարձու աշխատանքի կախումը կապիտալից, բանւոր դասակարգի վիճակը աւելի ևս տանում են դէպի յարաբերական և հրքեմն էլ բացարձակ վատթարացում:

«Այսպիսով տեխնիկայի կատարելագործումը, որ նշան է աշխատանքի արտադրողականութեան մեծացման և հասարակական հարստութեան աճման, բուրժուական հասարակութեան մէջ պայմանաւորում է հասարակական անհաւասարութեան աճեցումը, ունեորների և շուկեորների միջև եզած տարածութեան մեծացումը և աշխատատեղ մասսաների լայն խուււերի գոյութեան անապահովութիւնը, գործազրկութիւնը և զանազան տե-

սակի զրկանքների աճումը:

«Բայց որքան աճում ու զարգանում են բուրժուական հասարակութեանը յատուկ այս բոլոր հակասութիւնները, այնքան էլ աճում է նաև աշխատատեղ և շահագործուող մասսայի զժգոճութիւնը ներկայ իրակարգի դէմ, աճում են պրոլետարների թիւն ու համախմբումը և սրում նրանց պայքարը շահագործողների դէմ:

«Միևնոյն ժամանակ տեխնիկայի կատարելագործումը՝ կենտրոնացնելով արտադրութեան և շրջանառութեան միջոցները և կապիտալիստական ձեռնարկութիւններում համայնացնելով աշխատանքի պրոցեսը՝ շարունակ աւելի և աւելի արագ կերպով է ստեղծում կապիտալիստական շարաքրութիւնները կոմմունիստականով փոխարինելու նիւթական հընարաւորութիւնը, — այսինքն՝ այն սոցիալական յեղափոխութեան հնարաւորութիւնը, որը վերջնական նպատակն է կազմում միջազգային կոմմունիստական կուսակցութեան ամբողջ գործունէութեան, որպէս դասակարգային շարժման գիտակից արտայայտի:

«Փոխարինելով արտադրութեան ու շրջանառութեան միջոցների մասնաւոր սեփականութիւնը հասարակականով, և հասարակութեան բո-

լոր անդամների բարեկեցութիւնն որ բազմակողմանի զարգացումն ապահովելու համար՝ հասարակական արտադրական պրոցեսը համաշափօրէն կազմակերպելով, — պրոլետարիատի սոցիալական յեղափոխութիւնը կոչնչացնէ հասարակութեան բաժանումը դասակարգերի և այդպիսով կազատագրէ համայն ճնշւած մարդկութիւնը, որով վերջ կը դնէ հասարակութեան մէկ մասի միւսին շահագործելու ամեն տեսակ ձեւերին:

Այդ սոցիալական յեղափոխութեան անհրաժեշտ պայմանն է պրոլետարիատի զիկտատորան, այսինքն պրոլետարիատը պէտք է ձեռք բերէ այնպիսի քաղաքական իշխանութիւն, որով հնարաւորութիւն ունենայ ճնշելու շահագործողների ամեն տեսակ գիմարութիւնը:

Միջազգային կոմմունիստական կուսակցութեան նպատակն է ընդունակ դարձնել պրոլետարիատին՝ իրագործելու իր մեծ պատմական առաքելութիւնը. դրա համար կազմակերպում է նրան իբրև մի ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւն, որ ընդգէմ է կանգնում բոլոր բուրժուական կուսակցութիւններին, ղեկավարում է նրա դասակարգային պայքարի արտայայտումները, մերկացնում է նրա առաջ շահագործողների և շահագործ-

ւողների շահերի անհաշտ ներհակութիւնը և պարզաբանում է նրան տաշիկայ սոցիալական յեղափոխութեան պատմական նշանակութիւնն որ ամհրաժեշտ պայմանները: Իրմ հեռ միւսին նա մնացած համայն աշխատաւոր և շահագործւող մասայի առջև երևան է հանում նրա դրութեան անյուսալիութիւնը կապիտալիստական հասարակութեան մէջ և սոցիալական յեղափոխութեան անհրաժեշտութիւնը՝ յանուն նրա սեփական ազատագրութեան՝ կապիտալի տաշ բերած ճրնշումից: Բանւոր դասակարգի կուսակցութիւնը, կոմմունիստական կուսակցութիւնը իր շարքերն է հրաւիրում աշխատաւոր և շահագործւող ազգաբնակիւթեան բոլոր խաւերին, որչափով նրանք աստիճանաբար կընդունեն պրոլետարական տեսակէտը:

Կապիտալի կենտրոնացման և խրտացման պրոցեսը, ոչնչացնելով ազատ մրցակցութիւնը, քսաներորդ դարի սկզբում յանդեզ կապիտալիստական զօրեղ մանուգլխա մեծաշնորհ, միութիւնների ստաշացման. ինչպէս, օրինակ, սինդիկատների, արտելների, տրեստների, որոնք անտեսական բովանդակ կեանքում ստացան վճռական նշանակութիւն. — յանդեցին բանկային կապիտալի և արդիւնտրերական հսկայական կենտ-

բոնացում սաացած կապիտալի միացման, ապա և կապիտալի տնտեսային արտահանութեանը դէպի օտար երկրներ: Տրեստները, ընդգրկելով կապիտալիստական պետութիւնների ամբողջ խմբակցութիւններ, ձեռք են զարկել աշխարհը տնտեսապէս բաժանելու դործին, — աշխարհի, որ տեքրիտորիալ կերպով արդէն քաժանուած է հարուստ երկրների միջև: Իս ֆինանսական, գրամական կապիտալի մի գարեղջան է, որ անխուսափելիօրէն սրում է պայքարը կապիտալիստական պետութիւնների միջև, որը և միևնոյն ժամանակ հանդիսանում է իմպերիալիզմի գարեղջան:

Յրանից անխուսափելիօրէն առաջ են գալիս իմպերիալիստական պատերազմներ՝ վաճառքի շուկաներ ձեռք բերելու համար, կապիտալի գործադրութեան շրջանների, հում նիւթերի և բանւորական ոյժի համար պատերազմներ, այսինքն՝ համաշխարհային տիրապետութեան և մանր ու թոյլ ժողովուրդների վրայ գերիշխելու համար: Ընց պղպիսի պատերազմն է 1914—1918 թւականների առաջին մեծ իմպերիալիստական պատերազմը:

Եւ համաշխարհային կապիտալիզմի գարգացման արտակարգ բարձր աստիճանի ընդհանրապէս, ազատ մրցակցութիւնը պետական-մոնոպոլիս-

տական կապիտալիզմով փոխարինելը, քանկերի ու կապիտալիստների միութիւնների հաւասարապէս նախապատրաստելը մի ապարատի՝ արտադրութեան պրոցեսը համայնօրէն կանոնաւորելու և մթերքները բաժանելու համար, կապիտալիստամենաշնորհների լապտացման հետ կապւած թանգութեան ու սինդիկատների ճնշումը բանւոր դասակարգի վրայ, սրա ճորտացումը իմպերիալիստական պետութիւնների կողմից, պըրօլիտարիատի տնտեսական և քաղաքական պայքարի սոսկալի դժւարացումը, իմպերիալիստական պատերազմից առաջացած սարսափները, աղէտները, քայքայումները, — ահա այս ամենը անխուսափելի գարձրին կապիտալիզմի խորտակումը և փոխանցումը հասարակական տնտեսութեան առաւել բարձր ձևին:

Իմպերիալիստական պատերազմը չէր կարող վերջ տրւել բուրժուական կառավարութիւնների կողմից ոչ միայն արդար, այլ ընդհանուր առմամբ որևէ հաստատուն հաշտութեամբ: Կապիտալիզմի ներկայ գարգացման աստիճանում անխուսափելիօրէն փոխւել է և փոխուած է մեր աչքերի առջև աշխատուոր շահագործւող մասսաների, քաղաքացիական կռիւ ընդդէմ բուրժուազխայի դրուխ

ուսննալով պրոլետարիատին:

Հետզհետէ անոյ գրոնը պրոլետարիատի կողմից է մանաւանդ նրա յաղթութիւնները առանձին երկրներում առաւել ևս ուժեղացնում են շահագործողները դիմագրութիւնը և առաջ են բերում նրանց կողմից կապիտալիստների միջազգային միութեան նոր ձևերի կազմակերպումը (Վեդգերի կիզա և այլն), որոնք կազմակերպելով բոլոր երկրների շահագործումը համաշխարհային մասշտաբով, իրանց մօտաւոր ճիգերը լարում են բոլոր երկրների պրոլետարիատի յեղափոխական շարժումները անմիջական կերպով ճնշելու համար:

Այս ամենը անխուսափելիորէն հասցնում է մի կացութեան, որով առանձին պետութիւնների ներքին քաղաքացիական պատերազմները դուզակցւում են յեղափոխական պատերազմների հետ՝ թէ պաշտպանող պրոլետարական և թէ նշուած ժողովուրդների երկրներում՝ ընդդէմ իմպերիալիստական պետութիւնների լծի:

Նման պայմաններում խաղաղասիրական լուղունգները, կապիտալիստական կարգերում միջազգային զինաթափման, միջնորդ դատարանների և այլն լուղունգները հանդիսանում են ոչ միայն որպէս յետադիմական ուտոպիա, այլ պարզապէս

խարում են աշխատւորներին, ճգնակցով զինաթափ անել պրոլետարիատին, հետո պահելով նրան բուրժուազիային զինաթափ անելու խնդրից:

Միմիայն պրոլետարական, կոմունիստական յեղափոխութիւնը ընդունակ է դուրս հանելու մարդկութիւնը այն փակուղիից, որ օտեղծել են իմպերիալիզմն ու իմպերիալիստական պատերազմները: Որքան էլ խոշոր լինեն յեղափոխութեան դժւարութիւններն ու նրա ժամանակաւոր հնարաւոր անյաջողութիւնները և կամ հակաշեղափոխութեան ակիքները, վերջի վերջոյ պրոլետարիատի յաղթանակը անխուսափելի է:

Համաշխարհային պրոլետարական յեղափոխութեան այս յաղթանակը պահանջում է լիակատար փոխադարձ վստահութիւն և առաջուր երկրների բանուր դասակարգի յեղափոխական գործողութիւնների սերտ կապ ու միութիւն:

Այս պայմանները չեն իրագործւի, մինչև որ տեղի չունենայ սկզբունքային վճռական խզումը, ապա և անողորմ կռիւ ըյայտարարւի սոցիալիզմի այն բուրժուազական ազատողման դէմ, որը պաշտօնական սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցութիւնների վերին խումբում յաղթանակող հանդիսացաւ:

Նման աղաւաղումն է, մի կողմից, օպորտիւնիզմի և սոցիալ շովինիստական հոսանքը, խօսքով՝ սոցիալիզմ, գործով՝ ազգամուրթիւն, սեփական ազգային բուրժուազիայի աւաղակային շահերի պաշտպանութիւնը՝ հայրենիքի պաշտպանութեան լողունքի քողարկումով, ինչպէս միշտ, այնպէս էլ մասնաւորապէս 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Այդ հոսանքի առաջացման պատճառն այն է, որ կապիտալիստական առաջաւոր պետութիւնները, կողոպտելով գաղութային և թոյլ ժողովուրդներին, հնարաւորութիւն են տալիս բուրժուազիային՝ ի հաշիւ կողոպուտով ձեռք բերած այն գերաշահօգուտի՝ արտօնեալ վիճակում դնելու և կաշառելու նաև պրոլետարիատի վերին խաւերին, ապահովելով նրանց համար խաղաղ պայմաններում քաղքենիական-մեղչանական մի տանելի դոյութիւն, ապա վերցնելով այդ խաւերի պարագլուխներին ծառայութեան մէջ: Օպորտիւնիստներն ու սոցիալազգայնամոլները, դառնալով բուրժուազիայի սպասաւորներ, նոյն ժամին դառնում են պրոլետարիատի դասակարգային պարզ թշնամիները, մասնաւորապէս այժմ, երբ նրանք կապիտալիստների հետ միացած՝ զինւած ոյժերով ճնշում են պրոլետարիատի յի-

դափոխական շարժումները և թէ իրանց և թէ օտար երկրներում:

Միւս կողմից՝ սոցիալիզմի բուրժուազական աղաւաղումն է նաև «կենտրոնի» հոսանքը, որ նշմարելի է բոլոր կապիտալիստական երկրներում և որոնք տատանւում են սոցիալազգայնամոլների և կոմմունիստների միջև, պաշտպանելով միութիւնը աւալիներին հետ և օգնելով վերածնելու սնանկացած երկրորդ Ինտերնացիոնալը:

Յանուն պրոլետարիատի ազատագրութեան մղած պայքարի զեկավարը հանդիսանում է բացառապէս նոր, Երրորդ կոմմունիստական Ինտերնացիոնալը, որի բանակներից մէկըն է Ռ. Կ. Կ.-ը: Այս Ինտերնացիոնալը փաստօրէն ստեղծել է կոմմունիստական կուսակցութիւնների կազմակերպման պրոցեսում, որը առաջ է եկել մի շարք երկրների նախկին սոցիալիստական կուսակցութիւնների ճշմարիտ պրոլետարական տարրերից, մասնաւորապէս Գերմանիայում, իսկ ձևականօրէն հիմնել է 1919 թ.ի մարտին՝ Մոսկայում կայացած նրա առաջին համագումարում: Բոլոր երկրների պրոլետարական մասսաների կողմից մեծ համակրանք վայելող կոմմունիստական Ինտերնացիոնալը ոչ միայն անւանական կերպով է վերադառնում

մարքսիզմին, այն գաղափարական-
քաղաքական ամբողջ բովանդակու-
թեամբ, իր բոլոր գործողութիւններով
իրականացնելով Մարքսի յեղափոխա-
կան ուսմունքը՝ մաքրած բուրժուա-
կան-օպորտանիստական բոլոր աղա-
ւաղութիւններէ:

Հիմնաւորելով պրոլետարական դիկ-
տատուրայի պահանջները Ռուսաստա-
նի վերաբերմամբ, որի գլխաւոր ա-
ւանձնայատկութիւնն է ազգաբնա-
կութեան մէջ մանր-բուրժուական խա-
ւերի թւական գերակշռութիւնը, Ռ.
Կ. Կ.-ը իր առաջադրած նպատակնե-
րը ձեռնարկում է հետևեալ կերպով.

Բնդիմուելու եւ գաղափարապէս աւսարեղում

1. Բուրժուական հանրապետու-
թիւնը, նոյնիսկ ամենազեմոկրատիկ,
սրբազործած համաժողովրդական, հա-
մազգային կամ վերդասակարգային
կասքի լոզունգներով, անխուսափելի
կերպով անցել է իբրև բուրժուա-
կան դիկտատուրա, մի բուն կա-
պիտալիստների ձեռքով աշխատաւոր-
ների խոշոր մեծամասնութեանը շա-
հապործման, ձնչելու մեքենայ՝ շնոր-
հիւ հողի և արտադրութեան այլ մի-
ջոցների մասնաւոր սեփականութեան
գոյութեան: Իրան հակառակ՝ պրոլե-
տարական կամ խորհրդային դեմո-
կրատիան կապիտալիզմից ձնչած

գասակարգների, պրոլետարիատի և ազ-
քատ գիւղացիների—կիսապրոլետա-
րիատի, այսինքն՝ ազգաբնակչութեան
ամենամեծ մասի մասսայական կազ-
մակերպութիւնները գործից յարատև
և միակ հիմունքը պետական նմբողջ
ազարատի՝ տեղական թէ կենտրոնա-
կան, վարից մինչև վեր: Այդպիսով
Խորհրդային պետութիւնը իրականա-
ցրեց ի միջի այլոց անհամեմատ աւե-
լի լայն ձևով՝ ջան որևէ այլ տեղ՝ տե-
ղական և շրջանային ինքնավարու-
թիւնը առանց վերեւից նշանակած
որևէ իշխանութեան: Կուսակցութեան
նպատակներից մէկն է անխտնջ աշ-
խատանքով մարմնացնել դեմոկրա-
տիզմի այդ բարձրագոյն տիպը կեան-
քում ամենալիակատար ձևով, դեմո-
կրատիզմ, որը իր կանոնաւոր գոյու-
թեան համար պահանջում է մասսա-
ների կուլտուրական մակարդակի բար-
ձրացումը, նրանց կազմակերպութիւնն
ու ինքնագործունէութիւնը:

2. Հակառակ բուրժուական դեմո-
կրատիայի, որը քողարկում է իր պե-
տութեան գասակարգային բնոյթը,
Խորհրդային Իշխանութիւնը բացար-
ձակ ընդունում է գասակարգային ան-
խուսափելի բնոյթը իր վերաբերման
թեան, ջան յարմարովին իր քաղաքի
հասարակութեան բոլոր մասերը գասա-

13993-58



կարգերի, նաև սրա հետ կապւած ամեն մի գետական իշխանութեան գոյութիւնը: Թորհրդային գետութիւնը իր էութեամբ նպատակ ունի ճնշելու շահագործողներին զիմագրութիւնը, և Թորհրդային Սահմանագրութիւնը ելակէտ ունենալով այն տեսակէտը, թէ իւրաքանչիւր ազատութիւն ինքընրադիմացեան մի խարէութիւն է, եթէ նա հակասուծ է աշխատանքի ազատագրմանը կապիտալի լծից: Թորհրդային Եշխանութիւնը կանգ չէ առնում շահագործողներից քաղաքական իշխանութիւնը խլելու առաջ:

Պրոլետարական կուսակցութեան նպատակը կայանում է նրանում, որ առաջ տանելով շահագործողների դիմադրութեան ճնշման գործը, զազափարական պայքար մղելով խորապէս արմատացած նախապաշարմունքի դէմ այն մասին, թէ իրաւունքն ու ազատութիւնը իրր անպայման բուրժուական բնոյթ ունի, միկնոյն ժամանակ բացատրում է, որ քաղաքական իրաւունքների և ազատութեան այլ սահմանափակումները անհրաժեշտ են որպէս պայքարի ժամանակաւոր միջոցներ շահագործողների փորձերի դէմ պաշտպանելու կամ վերականգնելու համար իրանց արտօնութիւնները: Երբ աստիճանաբար վերանան մարդը մարդուն շահագործելու օրինկախւ պայ-

մանները, բնականաբար կը վերանայ նաև ժամանակաւոր միջոցներ գործադրելու անհրաժեշտութիւնը, ուստի և կուսակցութիւնը այն ժամանակ կը ձգտի նրանց թուլացնելու կամ իսպառ վերացնելու:

Յ. Բուրժուական դեմոկրատիան բուրժուականացել է քաղաքական իրաւունքների և ազատութեան ձևական յայտարարումով, ինչպէս, օրինակ, ժողովների, միութիւնների, մամուլի ազատութեան իրաւունքը իրր բոլոր քաղաքացիների համար հաւասարապէս: Իրապէս սակայն բուրժուական դեմոկրատիայի կարգերում թէ նրա վարչական գործադրութիւնը և թէ զլխաւորապէս աշխատաւորների տնտեսական սարկութիւնը՝ վերջիններիս դրել է անհնարին պայմանների մէջ այս կամ այն չափով օգտուելու այդ իրաւունքներից ու ազատութիւններից:

Պրոլետարական դեմոկրատիան, բնականապէս, իրաւունքների և ազատութիւնների ձևական յայտարարութեան տեղ տալիս է փաստօրէն նրանով օգտուելու հնարաւորութիւն, ամենից առաջ և ամենից շատ յատկապէս ազգաբնակչութեան այն դասակարգերին՝ որոնք ճնշւած էին կապիտալիզմից, այն է՝ պրոլետարիատին և գիւղացութեանը: Իրա համար Թոր-

հլրդային Իշխանութիւնը էքսպրո-
պրիացիայի է ենթարկում, բնագրա-
ւում բուրժուազիայից նրա շէնքերը,
ապարանները, թղթի պահեստները և
այլն՝ դնելով այն աշխատաւորների և
նրանց կազմակերպութիւնների արա-
մադրութեան տակ:

Ռ. Կ. Կ. նպատակն է գրգռել աշ-
խատաւոր ազգաբնակչութեան ամենա-
լայն մասսաներին՝ օգտուելու զեմոկ-
րատական իրաւունքներից ու ազա-
տութիւններից և լայնացնել դրա նիւ-
թական հնարաւորութեան սահման-
ները:

Բուրժուական զեմոկրատիան դա-
րերի ընթացքում յայտարարել է մարդ-
կանց հաւասարութիւնը՝ տնկախ նը-
րանց սեռից, կրօնից, ցեղից և ազ-
գութիւնից. սակայն կապիտալիզմը
թոյլ չէ տւել և ոչ մի երկրում իրա-
զօրժելու այդ հաւասարութիւնը, իսկ
իր զարգացման իմպերիալիստական
չրջանում ցեղային և ազգային լուծը
հասցրել է ծայրայեղ սրմանու եւ որով-
հետև Թորհրդային Իշխանութիւնը
աշխատաւորների Իշխանութիւնն է,
այդ պատճառով առաջին անգամ աշ-
խարհում նա կարող եղաւ կեանքի
բոլոր ասպարէզներում մինչև վերջ
իբրականացնել հաւասարութիւնը, մի-
անգամայն վերջ տալով կեռչ անհա-
ւասարութեան վերջին հետքերին ու-

մուսնական և ընդհանրապէս ընտա-
նեկան իրաւունքի սահմաններում:
Կաւաւիցութեան նպատակն է ներ-
կայումս վարել զխաւորապէս գաղա-
փարական և դաստիարակչական աշ-
խատանք՝ արմատախիլ անելու համայն
նախկին անհաւասարութեան և նա-
խապաշարմունքների բոլոր հետքերը,
մասնաւանդ պրոլետարիատի յետա-
մնաց խտերի շրջանում և գիւղացու-
թեան մէջ:

Չքաւականանալով կանանց ձևական
հաւասարութեամբ, կուսակցութիւնը
ձգտում է աչառելու նրանց տնային
հնացած տնտեսութեան նիւթական
ձանրութիւնից, փոխարինելով այն
կոմմունալ տներով, հասարակական
հաշարաններով, կենտրոնական լու-
ցարաններով, մտքներով և այլն:

5. Տալով աշխատաւոր մասսա-
ներին ամենալայն հնարաւորու-
թիւն՝ քան տւել է երբևիցէ բուր-
ժուական զեմոկրատիան և պարլա-
մենտարիզմը՝ կատարելու ներկայա-
ցուցիչների ընարաւթիւններն ու նը-
րանց յետ կանչելը բանւորների ու
գիւղացիների համար ամենապիւրիս
ձևով, Թորհրդային Իշխանութիւնը
ոչնչացնում է պարլամենտարիզմի
բացասական կողմերը, մասնաւանդ
օրէնսգիր և գործադիր Իշխանութիւն-
ների բաժանումը, ներկայացուցչա-

կան հիմնադրութիւններէ կտրուած լինելու հանգամանքը մասսաներից և այլն:

Թորհրդային պետութիւնը մերձեցումն է ստեղծում պետական ապագատի և մասսաների միջև նրանով, որ ընտրողական միաւոր և պետութեան հիմնական ըջիջ դառնում է ոչ թէ տերրիտորիալ շրջանը, այլ արտադրող միաւորը (օր. գործարանը):

Կուսակցութեան նպատակն է նաև վերոյիշեալ աշխատանքը այդ ուղղութեամբ տանելուց զատ, գլուխ բերել իշխանութեան օրգանների և աշխատաւոր մասսաների մերձեցումը խիստ և լիակատար կերպով իրականացնելով դեմոկրատիզմը գործնական կեանքում նոյն մասսաների կողմից, մանաւանդ պաշտօնական մարդկանց պատասխանատուութեան և հաշեւաութեան միջոցով:

6. Այն ժամանակ, երբ բուրժուական դեմոկրատիան՝ հակառակ իր յայտարարութիւնների՝ զօրքը դարձնում է ունևոր դասակարգի ձեռքին մի գործիք, անջատելով նրան աշխատաւոր մասսաներից և հակադրելով նոյն մասսաներին, միաժամանակ սխնչացնելով կամ զժւարացնելով զինւորների քաղաքական իրաւունքների իրազօրման հնարաւորութիւնը, Թորհրդային պետութիւնը բանւոր-

ներին և զինւորներին ի մի է ձուլում իր օրգանների՝ խորհուրդների մէջ, նրանց իրաւունքների լիակատար հաստատութեան և շահերի միատեսակութեան հողի վրայ: Կուսակցութեան նպատակն է պաշտպանել և զարգացնել զինւորների և բանւորների այդ միութիւնը Խորհուրդների մէջ, ամբապնդելով անխզելի կապը զինւած ոյժի և սլողխտարիատի ու կիսապրօլետարիատի կազմակերպութիւնների միջև:

7. Քաղաքի արդիւնաբերական պրօլետարիատի զեկավարող դերը ամբողջ յեղափոխութեան ընթացքում, — որպէս ըստ ամենայնի կենտրոնացած, միացած, լուսաւորւած և պայքարում փորձւած մասը աշխատաւոր մասսաների, — արտայայտեց թէ Թորհուրդների առաջացման բոպէին և թէ զրանց իշխանութեան օրգանների վերածելու պրօցեսի ամբողջ ընթացքում:

Մեր Թորհրդային Սահմանադրութիւնը արտայայտել է այդ երևոյթը, տուլով սակայն մի որոշ համեմատական գերակշռութիւն արդիւնաբերական պրօլետարիատին, քանի զիւզական մանր բուրժուական սրբշ մասսաները ըստ ամենայնի անկազմակերպ են:

Ռ. Կ. Կ., բացատրելով այդ առանձ-

նաշնորհման ժամանակաւոր. բնոյթը, որ պատմականորէն կապ ունի դիւզի օգցիալիստական կազմակերպութեան դժուարութիւններէ հետ, պարտաւոր է անյողպող կերպով և սխաւեմատիկորէն օգտագործել արդիւնաբերական պրոլետարիատի այդ վիճակը աւելի սերտ միացնելու համար առաջաւոր բանւորներին զիւզական աւելի յեազէմ ու անկազմակերպ պրոլետարական ու կիտապրոլետարական մաստաների, այլև միջին զիւզացիութեան հետ, — Կարկաւ իբրև հակաշինո նեղ համաբարային ու նեղ արհեստակցական այն շահերի, որոնք սնուցանուած էին կապիտալիզմի շնորհիւ բանւորներէ շրջանում:

Յ. Պետութեան, բացառապէս Խորհրդային կազմակերպութեան շնորհիւ, պրոլետարիատի յեղափոխութիւնը կարողացաւ միանգամից շարժել ու ներմտիկն կործանել հին, բուրժուական, շինովելիական ու դատարանական պետական ապարատը: Սակայն, լայն մաստաների կուլտուրական մակարդակի ոչ բաւականաչափ բարձր լինելը, մաստաների առաջ մղած պատասխանատու պաշտօն վարող գործիչների անհիմաժեղա փորձառութեան բացակայութիւնը, հին կարգի մասնազէտներին ծանր պայմաններում հապճեպ գործի հրաւիրելու անհրա-

ժեշտութիւնը և քաղաքի տմենադարգացած բանւորական խաւերին զինւորական գործերով դրադեցնելը, Խորհրդային կարգերում առաջ բերեց բիւրօկրատիզմի մասնակի վերածնունդը:

Սմենսովճուական պայքար մղելով բիւրօկրատիզմի դէմ, Ռ. Կ. Կ. այդ շարժքի կատարեալ վերացման համար առաջարկում է հետեւեալ միջոցները.

ա) Խորհրդի ամեն մի անդամին պարտադիր մասնակցութեան հրաւիրել՝ որոշ աշխատանք կատարելու համար պետական վարչական գործում:

բ) Հետևողական հերթակալութեան սահմանումն այդ աշխատանքների այն խմատով, որ նրանք հետզհետէ կարողանան ընդգրկել կառավարութեան միւս բոլոր ճիւղերը:

գ) Հետզհետէ զբաւել ամբողջ աշխատաւոր ազգաբնակչութիւնը անխափր՝ պետութիւնը կառավարելու գործին մասնակցելու համար:

Վերոյիշեալ բոլոր միջոցների բազմակողմանի և լիակատար իրագործումը, որ ներկայացնում է իրանից հետագայ քայլը այն ճանապարհի վրայ, որով ընթացել է Պարիզի Կոմունան, ապա կառավարելու Ֆունկցիաներին պարզ կերպաբանք հազօրդնլը՝ աշխատաւոր մաստաների կուլ-

տուրական մակարդակի բարձրացման միջոցով, այս բոլորը տանում է մեզ գէպի պետական իշխանութեան ուղին-չացում:

Ազգային յարաբերութիւնների ասպարեզում

9. Ազգային հարցում Ռ. Կ. Կ. դեկարտում է հեռեեալ հիմունքներով.

ա) Վարչող քաղաքականութեան գլխաւոր հիւսիսն է մերձեցումը տարբեր ուղղութիւնների պրոլետարիատի և կիսապրոլետարիատի՝ միասին յեղափոխական պայքար մղելու և կարւածատէրերին ու բուրժուազիային ասպարելու համար:

բ) Ճնշւած երկրների աշխատաւոր մասսաների՝ գէպի նրան ճրնշող պետութիւնների պրոլետարիատն ունեցած անվտանգութիւնը յաղթանարելու նպատակով անհրաժեշտ է որչնչացնել ազգային որիէ խմբակցութեան բոլոր արտօնութիւնները, ազգերի կատարեալ իրաւահաւասարութիւնը, ընդունել զաղութները և իրաւազուրկ ազգերի իրաւունքը պետութիւնից անջատելու խնդրում:

գ) Նոյն նպատակով կուսակց ւթիւնը առաջ է մղում ֆիզերատիւ մի բութեան սկզբունքը Խորհրդանէ ձևով կազմակերպւած պետութիւնների հետ, իբրև գէպի այդ պետութիւն-

ների կատարեալ միութիւնը տանող փոխանցման ձևերից մէկը:

դ) Թէ մի է ազգի անջատման կամքը արտայայտելու իրաւատէրը, այդ հարցում Ռ. Կ. Կ. կանգնած է պատմական-դասակարգային տեսակէտի վերայ, հաշի առնելով այն հանգամանքն էս, թէ պատմական զարգացման սր աստիճանի վրայ է կանգնած տեալ ազգը. միջնադարից գէպի բուրժուական գեմոկրատիան տանող ուղիք վրայ, թէ բուրժուական գեմոկրատիայից գէպի Խորհրդային կամ պրոլետարական գեմոկրատիան տանող և այլն:

Յամենայն գէպս ճնշող ազգերի պրոլետարիատի կողմից անհրաժեշտ է զործազրել առանձին զգուշութիւն և առանձնապէս ուշադիր լինել գէպի ճնշող ու իրաւազուրկ ազգերի աշխատաւոր մասսաների ազգային ըզգացմունքները: Միմիայն նման քաղաքականութեամբ հնարաւոր է ստեղծել իրական պայմաններ՝ միջազգային պրոլետարիատի ազգայնօրէն բազմազան տարրերի կամաւոր և ամբապինդ միացման համար, ինչպէս զա ապացուցեց Խորհրդային Ռուսաստանի շուրջը համախմբւած մի շարք ազգային Խորհրդային հանրապետութիւնների միացման փորձը:

Ձինւորական ասպարեզում

10. Ձինւորական հարցում կուսակցութիւնն իր նպատակը որոշում է հետեւեալ գլխաւոր հիմունքներով.

ա) Իմպերիալիզմի կազմալուծման և քաղաքացիական հեռզհետէ տարածւող պատերազմի շրջանում հնարուար չէ ոչ հին գորաքանակի պահպանումը, ոչ նորի կազմակերպումը՝ այսպէս ասած՝ ասպազասակարգային կամ հարիմազգային հիմունքների վրայ: Կարմիր Բանակը, իբրև գործիք պրոլետարական դիկտատուրայի, պէտք է հարկադրաբար ունենայ բացարձակ գասակարգային ընտրութիւն, այսինքն կազմել բացառապէս պրոլետարական կամ նրան մօտիկ գիւղացիական կիսապրոլետար խաւերից: Դասակարգերի ոչնչացումով միայն նման գասակարգային գորաքանակը կը զանայ սոցիալիստական համաժողովրդական միլիցիա:

բ) Անհրաժեշտ է ամենալայն կերպով վարժեցնել բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին զինւորական արհեստի մէջ, մտցնելով դպրոցներում համապատասխան աւարկաների գասաւուրթիւն:

գ) Կարմիր Բանակի դաստիարակութեան ու զինւորական ուսուցման աշխատանքը պիտի կատարւի գասա-

կարգային միացման և սոցիալիստական լուսաւորութեան հիմունքներով: Ուստի զինւորական պետերի կողքին անհրաժեշտ են քաղաքական կոմիսարներ ևս յուսալի և անձնազոհ կոմսունիստներից, իւրաքանչիւր զօրամասում ստեղծելով կոմսունիստական բջիջներ՝ գիտակցական կարգապահութիւն և ներքին կապ հաստատելու համար:

դ) Որպէս հակակշիռ հին գորաքանակի կարգերի՝ անհրաժեշտ է, ըստ հնարաւորութեան, կարճ ժամանակի գործադրումն կազարմային վարժութիւնների համար. կազարմաները մտեցնել զինւորական և քաղաքազինւորական դպրոցների տիպին. հրնարաւոր չափով սերտ կապ հաստատել զինւորական կազմերի և գործարանների, արհեստակցական միութիւնների ու ազքատ գիւղացիների կազմակերպութիւնների միջև:

ե) Կազմակերպչական անհրաժեշտ կապ և կայունութիւն կարելի է հազորդել յեղափոխական երիտասարդ բանակին միմիայն՝ գիտակից բանւորների և գիւղացիների շըրջանից վերցրած՝ առաջին նւազ թէկուզ ստորին՝ հրամանատարական կազմի օգնութեամբ: Սոցիալիզմին նւիրւած ըստ ամենայնի ընդունակ և հռանդուն զինւորներին հրամանատարական պաշ-

տօնների համար պատրաստելու գործը հանդիսանում է զօրաբանակ ստեղծելու գործում կարեւորագոյն նպատակներից մէկը:

դ) Անհրաժեշտ է ամենալայն չափով օգտագործել ու գործադրել վերջին համաշխարհային պատերազմի տըւած փորձը զօրաշարժական ու տեխնիքական ասպարէզներում: Իրա հետ միասին անհրաժեշտ է զօրաբանակի կազմակերպութեան և զօրավարժական ղեկավարութեան գործին լայն մտնակցութեան հրաւիրել հին զօրաբանակի դպրոցն անցած զինւորական մասնագէտներին: Իր հերթին նման գործին հրաւիրելու անհրաժեշտ պայմանը պէտք է լինի այն, որ զօրաբանակի քաղաքական ղեկավարութիւնը և հրամանատարական կազմի վրայ հարկաւոր վերահսկողութիւնը պիտի գտնուի բանւոր դասակարգի ձեռքին:

է) Հրամանատարական կազմի ընտրովի լինելու պահանջը, որ ունի սկզբունքային խոշոր նշանակութիւն բուրժուական զօրաբանակի վերաբերութեամբ, ուր հրամանատարական կազմը դատարիա բախում ու ջոկւում էր որպէս մի ապարաւ զինւորների դասակարգային հնազանդութեան համար, իսկ վերջիններին միջոցով նաև աշխատուոր մասնանների նընդ-

ման, այդ պահանջը միանգամայն կօրցնում է իր սկզբունքային նշանակութիւնը բանւորական և զիւզացիական հօրմիր բանակի վերաբերութեամբ: Ընտրողութեան և նշանակման հնարաւոր կոմբինացիան սակայն կարող է թելադրել յեղափոխական դասակարգային զօրաբանակին բացառապէս գործնական նկատառումներով և կախած է զօրամասերի կազմաւորման մակարդակից, նրանց խտացման աստիճանից, հրամանատարական կազմի իրական վիճակից և այլն:

Իստաստանական սուպարեզում

11. Իրանց ձեռքն առնելով ամբողջ իշխանութիւնը և միանգամայն վերջ տալով բուրժուական տիրապետութեան բոլոր օրգաններին, հին ձևի դատարաններին, — պրոլետարական ղեմակրատիան՝ բուրժուական զեմակրատիայի «դատաւորների ընտրութիւնը ժողովրդի կողմից» ձևակերպման փոխարէն՝ առաջ մղեց իր դասակարգային լողունը. «դատաւորներին ընտրել աշխատուորներից և միմիայն աշխատուորների ձեռքով», և իրավործեց այն դատարանի ամբողջ կազմակերպութեան մէջ, միաժամանակ հաւատարացնելով երկու սեւերի բոլոր իրաւունքները թէ դա-

տաւորների ընտրութեան և թէ նշարանց պարտականութիւնները կատարելու հարցում:

Արդարադատութիւնը վարելու գործին պրոխտարիստի և ազքատ գիւղացութեան ամենալայն մասսաներին մասնակից անելու համար դատարանում մտցւած է շարունակաբար փոփոխուող ժամանակաւոր դատաւորների մասնակցութեան իրաւունքը, որոնց ցուցակը կազմելու համար հըրաւիրում են բանւորական մասսայական կազմակերպութիւնները: Երեսնակցական միութիւնները և այլն:

Ստեղծելով ժողովրդական մի ամբողջական դատարան,— նախկին մի անվերջ շարք զանազան ձևի և բազմաստիճան դատարանների փոխարէն, — Խորհրդային Իշխանութիւնը դատարանի կառուցւածքը պարզ ձևեր է վերածում, զարմնելով այն բացարձակապէս մտայնի ազգաբնակչութեան համար, վերջ տալով ամեն անուշադրութիւններին, փոշոկիտային:

Վերացնելով տապալած կառավարութիւնների օրէնքները, Խորհրդային Իշխանութիւնը յանձնարարեց Խորհուրդների կողմից ընտրւած դատաւորներին կատարել պրոխտարիստի կամքը, զործազրկելով նրա դեկրետները, թոյլ ուղղութիւնների բացակայութեան համար լրիւ լինելու դէպքում

դեկաւարել սոցիալիստական իրաւագիտակցութեամբ:

Նման ձևով կազմակերպւած դատարանները պատիժների խնդրում արդէն մտցրել են արմատական փոփոխութիւն, իրականացնելով՝ պայմանական դատապարտումը ամենալայն չափերով, մտցնելով իբրև պատժիչ միջոց հասարակական պարսաւանքը, ազատութիւնից զրկել փոխարինելով պարտադիր աշխատանքով՝ միևնոյն ժամանակ պահելով պատժողի ազատութիւնը, բանտերը փոխարինելով դաստիարակչական հիմնարկութիւններով, այլև տալով հնարաւորութիւն ընկերական դատարանների գործադրութեան:

Ռ. Կ. Կ., պաշտպանելով դատարանի հետագայ զարգացումը նման ձևով, պէտք է ձգտի ամբողջ աշխատաւոր ազգաբնակչութեանը գրաւել մասնակցելու դատաւորների պարտականութիւնների կատարման գործին, իսկ պատիժների սխտեմը վերջնականապէս փոխարինելու դաստիարակչական բնոյթ ունեցող միջոցների սխտեմով:

Ժողովրդական լուսաւորութեան ասպարէզում

12. Ժողովրդական լուսաւորութեան

ասպարէզում Ռ.Կ. Կ. նպատակ է դր-
նում շարունակել դեռ 1917 թ. հոկ-
տեմբերեան յեղափոխութեան սկզբից
սկսած գործը՝ այն է բուրժուազիա-
յի տիրապետութեան դասակարգային
գործիք կղած դպրոցը զարձնել հասար-
ակութեան դասակարգերի բաժա-
նումը կատարելապէս ոչընչացնող,
հասարակութեան համար կոմմունիս-
տական վերածնունդ բերող մի գոր-
ծիք, հասցնելով այդ գործը իր վախ-
ճանին:

Պրոլետարիատի զիկասատուրայի շըր-
ջանում, այսինքն՝ երբ կոմմունիզմի
լիակատար իրականացման համար կը
ստեղծուեն նախապատրաստող պայ-
մաններ, — դպրոցը պէտք է լինի ոչ
միայն կոմմունիզմի սկզբունքների
հաղորդիչը ընդհանրապէս, այլև պրո-
լետարի զապահարական, կազմակերպ-
չական, դաստիարակչական ազդեցու-
թեան հաղորդիչը կիսապրոլետար և
աշխատատու մասսաների ոչ պրոլե-
տար խաւերի վրայ, դաստիարակելու
համար այն նոր սերունդը, որ ընդու-
նակ պիտի լինի վերջնականապէս հաս-
տատելու կոմմունիզմը: Մերձաւոր
նպատակն է այդ ուղղութեամբ, ներ-
կայ ժամանակում Թորհրդային Իշխա-
նութեան հաստատած դպրոցական և
լուստւորութեան գործի հետևեալ հի-
մունքների հետագայ զարգացումը:

ա) Պարտադիր և ձրի ընդհանուր պո-
լիտիկանի քական (արտադրութեան բո-
լոր գլխաւոր ճիւղերի գործնակա-
նին և տեսականին ծանօթացնող գի-
տութիւն) կրթութիւն երկու սեռի
համար մինչև 17 տարեկան հասակը:
բ) Ստեղծել միջ-դպրոցական հիմ-
նարկութիւնների ամբողջ ցանց, ինչ-
պէս, օրինակ՝ մսուրներ, մանկապար-
տէզներ, մանկասններ և այլն՝ հա-
սարակական դաստիարակչութեան
գործի բարելաւութեան և կնոջը ա-
զատագրելու համար:

գ) Մի ամբողջութիւն կազմող աշ-
խատաւորական դպրոցի սկզբունք-
ների լիակատար իրականացու-
մը, դասաւանդութիւնը կատարելով մայ-
րենի լեզուով. խառն ուսուցում երկ-
սեռ մանուկների. ուսուցումը ան-
պայման Թորհրդային, այսինքն՝ կրօ-
նական որևէ ազդեցութիւնից ազատ,
սերտ կապակցութեամբ հասարակա-
կան - արտադրողական աշխատանքի
հետ. ահա այս ամենը պատրաստելու
է կոմմունիստական հասարակութեան
համար բազմակողմանի զարգացած
անդամներ:

դ) Մատակարարումն պետութեան
հաշուով բոլոր աշակերտների համար
սնունդ, հագուստեղէն, օտնաման և
դպրոցական պիտոյքներ:

ե) Պատրաստել լուստւորութեան

ասպարէզում գործողների նոր շարքեր, որոնք սողորւած լինեն հոմմունիտական գաղափարներով:

դ) Աշխատուոր ազգաբնակութիւնը գրաւել դէպի ակտիւ մասնակցութիւն լուսաւորութեան գործում («Հանրային կրթութեան խորհուրդների» դարգացումը, գրադէտների մօբիլիզացիան և այլն):

է) Պետական բազմակողմանի օգնութիւն բանւորների և դիւղացիների ինքնակրթութեան և ինքնազարգացման համար. (ստեղծել արտազարգացկան կրթական հիմնարկութիւնների մի ամբողջ ցանց՝ գրադարանների, հասակաւորների համար դպրոցների, ժողովրդական տների և համալսարանների, կուրսերի, դասախօսութիւնների, կինեմատոգրաֆիների, նկարչատների և այլն):

ը) Պրոֆեսիոնալ կրթութեան լայն զարգացումն 17 տարեկանից բարձր պատանիների համար՝ հիմնւած պոլիտեխնիկական ընդհանուր գիտութիւնների վրայ:

թ) Լայն հնարաւորութիւն ստեղծել բոլոր ցանկացողների համար բարձրագոյն դպրոցում սովորելու, առաջին հերթին բանւորների համար. գրաւել բարձրագոյն դպրոցում դասաւանդելու ընդունակ և կարող ոյժերին. վտարումն բոլոր արհեստական

խոչնդոտների, որոնք յարուցում են երիտասարդ գիտական ոյժերի և ամբիոնի միջև. սովորողներին նախական ապահովումն, որով իրական հնարաւորութիւն արել բանւորներին և դիւղացիներին օգտւելու բարձրագոյն դպրոցով:

ժ) Համահաւասար չափով անհրաժեշտ է բանալ և աշխատուորների համար մատչելի դարձնել պեղարեստի բոլոր դանձերը, որոնք ստեղծագործւած են նրանց աշխատանքի շահագործման հիմունքի վրայ և մինչև այժմ էլ մնում են շահագործողների թացառիկ տրամադրութեան տակ:

ժա) Կոմմունիստական գաղափարների ամենալայն պրոպագանդի զարգացումն, այդ նպատակի համար օգտագործելով պետական իշխանութեան ապարատն ու միջոցները:

Կրօնական յարաբերութիւնների ասպարէզում

13. Կրօնի նկատմամբ Ռ. Կ. Կ. չէ բաւականանում եկեղեցին պետութիւնից և դպրոցը եկեղեցուց բաժանելու դեկրետով, որպիսի ձեռնարկութեան մասին խօսում է իր ծրագիրների մէջ նաև բուրժուական դեմոկրատիան և սակայն ոչ մի տեղ աշխարհում մինչև վերջ չէ իրագործել այն, շնորհիւ այն բազմապիսի կա-

պերի, որ ունի կապիտալը կրօնական պրոպագանդի հետ:

Ռ. Կ. Կ. ղեկավարում է այն համոզումով, որ մասսաների հասարակական-տնտեսական ամբողջ գործունէութեանը հետեւողականութիւն և գիտակցութիւն հաղորդելով միայն կատարեալ մահւան կը գատապարտեն կրօնական նախապաշարմունքները: Կուսակցութիւնը ձգտում է կատարելապէս ոչնչացնելու շահագործող դասակարգերի և կրօնական պրոպագանդի կազմակերպութիւնների միջև եղած կապը, նպաստելով աշխատաւոր մասսաների իրական ազատագրմանը կրօնական նախապաշարմունքներից և կազմակերպելով գիտական-լուսաւորական և հակա-կրօնական ամենալայն պրոպագանդ: Ընդ սմին անհրաժեշտ է հոգատար վերաբերմունքով խուսափել հաւատացեալների զգացմունքներին որևէ վիրաւորանք հասցնելուց, որ կարող է աւելի շուտ կրօնամոլութիւնը ամբաղնդել:

Տնտեսական ասպարեզում

14. Անխախտ շարունակի և հասցնել իր վախճանին արդէն սկսած և իր գլխաւոր ու հիմնական մասում վերջացած էքսպրոպրիացիան բուրժուազիայի.

ա) Արտադրութեան միջոցներն ու

չրջանառութիւնը դարձնել սեփականութիւն Խորհրդային Հանրապետութեան, այսինքն՝ ընդհանուր սեփականութիւն բոլոր աշխատաւորների:

բ) Որպէս գլխաւոր, հիմնական և Խորհրդային Իշխանութեան տնտեսական ամբողջ քաղաքականութիւնը որոշող նպատակ՝ անհրաժեշտ է իրերի արտադրող ոյժեջը հասցնել ամենաբարձր լարման: Ի նկատի ունենալով երկրի ապրած ծայրաստիճանի ծանր քայքայումը, ամեն ինչ պիտի ենթարկել մի գործնական նպատակի՝ անմիջապէս ինչ գնով էլ լինի մեծացնել ազգաբնակչութեան համար անհրաժեշտագոյն մթերքների քանակութիւնը: Այդ տեսակետից գործնական հետևանքներով պիտի չափուի Խորհրդային այն իւրաքանչիւր հիմնարկութեան աջող գործունէութիւնը, որը կապւած է ժողովրդական տնտեսութեան հետ:

Իրա հետ միասին կարևոր է առաջին հերթին ուշադրութիւն դարձնել հետևեալի վրայ.

գ) Իմպերիալիստական տնտեսութեան կազմալուծումը Խորհրդային շինարարութեան առաջին շրջանին ժառանգութիւն թողեց յայտնի քառօրային վիճակ՝ արտադրութիւնը կազմակերպելու և կառավարելու գործում: Այդ հիման վրայ հարկա-

դրաբար առաջ է մղուում, — Իբրև արմատական միջոց, — երկրի ամբողջ անտեսութեան զործունէութեան մաքսիմալ միութիւնը՝ մի ընդհանուր համապետական ծրագրով, ապա՝ արագորութեան ամենամեծ կենտրոնացումն առանձին ճիւղեր և ճիւղերի խմբակցութիւնները միացնելու իմաստով: Անհրաժեշտ է կենտրոնացնել արտագրութիւնը արտագրող լաւագոյն միաւորների մէջ՝ անտեսական ձեռնարկներին աւելի արագ կատարումն հաղորդելու իմաստով, այլև արտագրական ամբողջ ապարատի խիստ կանոնաւորումը և խելացի ու անտեսաբար օգտագործումը երկրի բոլոր նիւթական միջոցների:

Իրա հետ միասին անհրաժեշտ է հոյ տանել լայնացնելու անտեսական աշխատակցութիւնն ու քաղաքական կապերը այլ ժողովուրդների հետ, ձգտելով միաժամանակ հաստատելու անտեսական մի ընդհանուր ծրագիր այն ժողովուրդների հետ, որոնք ձեռք են դարձել Խորհրդային շինարարութեան:

դ) Մանր և անաշխատգործական արդիւնաբերութեան նկատմամբ անհրաժեշտ է լայնօրէն օգտագործել այդ արդիւնաբերութիւնը, պետական պառէկներ տալով անաշխատգործներին, մանր և անաշխատգործ արգիւնա-

բերութիւնն ևս մուծել հում նիւթեր և վառելանիւթ մատակարարելու ընդհանուր ծրագրի մէջ, ապա տալ ներանց նաև դրամական օժանդակութիւն՝ պայմանով, որ առանձին անաշխատգործներն ու նրանց արտելները, արտագրող կօօպերատիւներն ու մանր ձեռնարկութիւնները միանան և կազմեն աւելի խոշոր արտագրական և արդիւնաբերական միաւորներ: Նման միութիւնները պիտի խրախուսեն անտեսական արտօնութիւններ արւելումը նրանց, որոնք ուղղւած պիտի լինեն անաշխատգործների մանր արդիւնաբերողներ զառնալու ձգտումը ոչնչացնելու կողմը, ապա և ստեղծել արտագրական այդ յետամնաց ձևերի համար բնական անցման պայմաններ՝ անցնելու դէպի խոշոր և բարձր մեքենայական արդիւնաբերութեան ձևերին:

ե) Համայնացրած (հասարակականացրած) արդիւնաբերութեան կազմակերպական ապարատը պէտք է յենի ամենից առաջ արհեստակցական միութիւնների վրայ: Նրանք պէտք է աւելի և աւելի ազատագրեն համքարային նեղ վիճակից և զառնան արտագրական խոշոր միութիւններ, որոնք ընդգրկում են և հետզհետէ պիտի ընդգրկեն արտագրական տեսալ ձիւղի բոլոր աշխատաւորներին:

Համաձայն Թորնթային Հանրապետութեան օրէնքների և հաստատուած պրակտիկայի արհեստակցական միութիւնները, որոնք—իրրե մասնակցողներ արդիւնարեութիւնը կառավարող տեղական և կենտրոնական բոլոր օրգաններում—պէտք է ժողովրդական ամբողջ տնտեսութեան փաստացի կառավարութիւնը վերցնեն իրանց ձեռքը, իրրե տնտեսական մի ընդհանուր ամբողջութեան: Այսպիսով ապահովելով անխցելի կապը պետական կենտրոնական վարչութեան, ժողովրդական տնտեսութեան աշխատաւոր լայն մասսաների միջև, արհեստակցական միութիւնները պէտք է ամենալայն շափելով գրաւեն վերջիններիս՝ տընտեսութիւնը վարելու անմիջական աշխատանքի համար: Արհեստակցական միութիւնների մասնակցութիւնը տընտեսութիւնը վարելու և լայն մասսաներին դէպի այն գրաւելու գործը միւկնոյն ժամանակ այն պիտաւոր միջոցն է, որով պայքար պիտի մղւի Թորնթային Իշխանութեան տնտեսական ապարատի բլբրոկրատիպացիայի գէմ և հնարաւորութիւն տրւի արտադրութեան արդիւնքների վրայ ժողովրդական ճշմարիտ վերահսկողութիւն նըշանակելու:

դ) Անհրաժեշտ է ժողովրդական տնտեսութիւնը կանոնաւոր զարգաց-

նելու նպատակով մինչև վերջին հնարաւորութիւն օգտագործել պետութեան մէջ եղած բանւորական բոլոր ոյժերը, նրանց կանոնաւոր բուժանումն ու վերարածանումը՝ թէ տարբեր տերրիտորիալ շրջանների միջև և թէ ժողովրդական տնտեսութեան աարբեր ճիւղերի. անհրաժեշտ է կազմել Թորնթային Իշխանութեան տընտեսական քաղաքականութեան մօտաձոր ծրագիրը, որն իրագործելի կարող է միմիայն սերտ կապակցութեամբ արհեստակցական միութիւնների հետ: Անհամեմատ աւելի լայն և սխտեմատիկ կերպով, քան երբեքից է այդ եղել է, պէտք է գործադրի Թորնթային Իշխանութեան կողմից ամբողջ աշխատընդունակ ազգաընակութեան զլխովին մօրբիլիպացիան արհեստակցական միութիւնների մասնակցութեամբ՝ հասարակական յայտնի աշխատանք կատարելու համար:

է) Աշխատանքի կապիտալիստական կազմակերպութեան անկման պայմաններում երկրի արտադրող ոյժերը վերականգնել և զարգանալ, այլև արտադրական սոցիալիստական ձեւը ամրապնդել կարող են միայն աշխատաւորների ընկերական կարգապահութեան, նրանց մաքսիմալ ինքնագործունէութեան, պատասխանատուութեան գիտակցութեան և աշ-

խառանքի արգիւնաւէտութեան վրայ
փոխադարձ խառագոյն վերահսկողու-
թեան հիմունքների վրայ:

Այդ նպատակին հնարաւոր է հաս-
նել միմիայն մասսաների զատախարա-
հութեան վրայ յամառ և սիսանմա-
տիկ աշխատանք գործադրելով, որպի-
սին այժմ հեշտացրած է շնորհիւ այն
հանգամանքի, որ մասսաները գործով
տեսնում են կապիտալիստի, կալա-
ծատիրոջ և վաճառականի վտարումը
և ապա՝ սեփական փորձով զալիս են
այն համոզման, որ իրանց բարեկե-
ցութեան աստիճանի բարձրացումը
կախած է բացառապէս սեփական
աշխատանքի կարգապահ վիճակից:

Սոցիալիստական նոր կարգապահու-
թիւն ստեղծելու գործում պիտաւոր
գերն ընկնում է արհեստակցական
միութիւնների վրայ: Վերջիններս հը-
րաժարելով հնացած գործելակերպից,
այդ նպատակը իրագործելու համար
պետք է գործադրեն և փորձեն զանա-
զան միջոցներ, ինչպէս օրինակ, հաս-
տատել հաշիւտութիւն, արգիւնք ցու-
ցապրելու նորմա, պատասխանատու-
թիւն յատուկ ընկերական բանւորա-
կան զատարանի տոջն և այլն:

բ) Արտադրող ոյժերի նոյն զար-
գացման գործը պահանջում է ան-
յապաղ, լայն և բազմակողմանի օգ-
տագործումն կապիտալիզմի թողած

ժառանգութեան՝ օգտագործումն պի-
տութեան և տեխնիկայի մասնագէտ-
ների, շնայելով որ նրանք գրեթէ բո-
լորը տողորւած են բուրժուական աշ-
խարհաճայեացքով ու սովորութիւննե-
րով: Այդ խաւերի գէժ մղւած՝ խիստ
պայքարի շրջանը, որ առաջ էր եկել
նրանց կազմակերպած սարսուածի շը-
նորհիւ, կուսակցութիւնը համարում է
վերջացած, քանի որ այդ սարսուածը
ընդհանուր ասամբ ընկճւած է: Կու-
սակցութիւնը պարտաւոր է արհես-
տակցական միութիւնների հետ առաջ
տանել իր նախկին գիծը. մի կողմից՝
քաղաքական ոչ մի գիջում չանել այդ
խաւին և անխնայ ճնշել նրա հակա-
յեղափոխական ոտնձգութիւնները,
միւս կողմից՝ նոյնպէս անխնայ պայ-
քարել այն կեղծ-արմատական, իրա-
պէս ազէտ սնապարծութեան գէժ,
լստ որի՝ աշխատուորնրը իբր թէ
կարող են յաղթահարելու կապիտա-
լիզմն ու բուրժուական կարգերը ա-
սանց սովորելու բուրժուական մաս-
նագէտներից, առանց օգտագործելու
նրանց հետ միասին իրկար աշխա-
տանք կատարելու:

Զգտելով ամեն մի աշխատանք հա-
ւասարապէս վարձատրելու և գէպի
լիակատար կոմմունիզմ, Խորհրդային
Իշխանութիւնը չի կարող այդ հաւա-
սարութիւնը իրականացնել անյապաղ

ներկայ մոմենտին, քանի որ այժմ տակաւին առաջին քայլերն են անուամ կապիտալիզմից կոմմունիզմին անցնելու համար: Ուստի անհրաժեշտ է տեժամանակ պահպանել մասնագէտների առաւել բարձր վարձատրութիւնը, որպէսզի նրանք կարողանան աշխատել առաջւանից ոչ վտար, այլ լաւ. նոյն նպատակով էլ չի կարելի հրաժարել մրցանակաբաշխութեան սխառեմից՝ ըստ ամենայնի աջող և կազմակերպչական առանձին աշխատանքի համար:

Հաւասար չափով անհրաժեշտ է բուրժուական մասնագէտներին մշտցընել ընկերական ընդհանուր աշխատանքի շրջանի մէջ ձեռք ձեռքի աւած հասարակ բանուոր մասսայի հետ, զի կալվարութեամբ գիտակից կոմմունիստների, և դրանով նպատակ կապիտալիզմի շնորհիւ իրարից անջատուած՝ ֆիզիքական ու մատուր աշխատանքի մշակների փոխադարձ հասկացողութիւնների մերձեցմանը:

(Է) Խորհրդային Իշխանութիւնը արդէն ձեռք է ստել մի շարք միջոցների՝ գիտութեան զարգացման համար և նրան մօտեցնելու արտագրութեանը. այդ միջոցներն են՝ հիմնել մի ամբողջ ցանց գիտական-ինստիտուտների, լաբորատորիաների, հարցաքննական-փորձնական կայա-

րանների, փորձնական արտադրութիւնների՝ տեխնիքական նոր մեթոդների ստուգութեան համար գիտերի ու կատարելագործութիւնների. այդ միջոցներից է նաև կազմակերպումը բոլոր գիտական ոյժերի և միջոցների և այլն: Ռ. Կ. Կ. պաշտպանելով այդ բոլոր միջոցները, ձգտում է նրանց հետագայ զարգացմանը, ստեղծելով գիտական աշխատանքի համար աւելի նպաստաւոր պայմաններ՝ երկրի արտադրող ոյժերի բարձրացման հետ հարստար:

Ինչպե՞ս ճեշտութեան ապարէլ զում

ժ) Խորհրդային Իշխանութիւնը զբաղւել է բերելով հողի մասնաւոր սեփականութեան կատարեալ վերացումը, այժմ հետամուտ է գործադրելու կեանքում մի շարք միջոցներ կազմակերպելու համար սոցիալիստական խոշոր հողագործութիւնը: Այդ միջոցներից աչքի ընկնող են հետեւեալները.

ա) Հաստատումն Խորհրդային արհեստութիւնների, այսինքն՝ սոցիալիստական խոշոր էկոնոմիաների.

բ) Պաշտպանութիւն հողը համայնօրէն մշակող ընկերութիւնների և հասարակութիւնների.

գ) Կազմակերպումն օլիտական միջոցներով սերմանելու շջանաւած հողերի՝ ուժ էլ որ պատկանեն նրանք.

դ) Բուրք գիւղատնտեսական ոչժե-
րի պետական մորիլիզացիան՝ եռան-
գուն միջոցներով գիւղատնտեսական
կուլտուրան բարձրացնելու համար.

ե) Պաշտպանումն գիւղատնտեսական
կոմմունաների, իբրև հողագործների
միանգամայն ազատ միութիւնների՝
վարելու համար մի ընդհանուր խոշոր
տնտեսութիւն:

Այս բոլոր միջոցների վրայ նայե-
լով իբրև այն միակ ճանապարհի, որը
տանում է հողագործական աշխատան-
քը դէպի բացարձակ ու անհրաժեշտ
բարձրացումն արդիւնաւէտութեան,
Ռ. Կ. Կ. ձգտում է ըստ հնարաւարու-
թեան լիակատար չափով մարմնացնե-
լու կեանքում այդ միջոցները, ձըգ-
տում է նրանց տարածմանը աւելի
յետաձևաց երկրամասերում, ձգտում
է նաև հետագայ քայլերն անելու մի-
կնոյն ուղղութեամբ:

Մտնաւանդ Ռ. Կ. Կ. պաշտպանում
է հետևեալը.

ա) Պետական ամենամեծ օժանդա-
կութիւն գիւղատնտեսական կօօպե-
րացիային, որ զբաղւած կը լինի գիւ-
ղատնտեսական միջոցների մշակու-
մով.

բ) Լայնօրէն գործադրուող հողի բա-
րելւածան սխտեմը.

գ) Լայն և կանոնաւոր մատակարա-
րում ինվենտարով աղքատ և միջին

գիւղացութեանը գործիքներ վարձով
արւող կենարոնների միջոցով:

Հաշի առնելով այն, որ գիւղական
մանր տնտեսութիւնը տակաւին եր-
կար ժամանակ պիտի դոյութիւն ու-
նենայ, Ռ. Կ. Կ. ձգտում է իրակա-
նացնել մի շարք միջոցներ՝ գիւղա-
ցիների տնտեսութեան արտադրողա-
կանութիւնը, արդիւնաւէտութիւնը
բարձրացնելու համար: Այդօրինակ
միջոցներն են.

ա) Գիւղացութեան հողից օգտւելու
գործի կանոնաւորումը (հողի ցիրու-
ցանութեան, երկարահողութեան ու
չնչացումը) և այլն.

բ) Մատակարարումն գիւղացիներին
ընտիր սերմացուով և արհեստական
պարարտացման միջոցներով.

գ) Ազնւացումն գիւղացիական ա-
նասունների տեսակների.

դ) Տարածումն հողագիտական գի-
տելիքների.

ե) Հողագիտական, ազրոնոմիական
օգնութիւն գիւղացիներին.

զ) Գիւղացիների գիւղատնտեսական
ինվենտարի վերանորոգումն Սորերգա-
յին նորոգող արհեստանոցներում.

զ) Հիմնել գործիքներ վարձով տը-
ւող պունկտերի փորձնական կայա-
րաններ, ցուցադաշտեր և այլն.

ը) Գիւղացիական հողերի բարե-
լատում:

Ի նկատի առնելով, որ քաղաքի և գիւղի հակադրութիւնը հանգիստնում է այն ամենախորունկ հիմունքներից մէկը, որով գիւղը տրնտեսապէս և կուլտուրապէս այնքան յետամնաց է, իսկ ներկայ ծանր ճրգնաժամի, կրիզիսի շրջանում թէ քաղաքը և թէ գիւղը դրւած են այլասերման և կործանման անմիջական խտանգի առջև, Ռ. Կ. Կ. այդ հակադրութեան ոչնչացման մէջ տեսնում է կոմմունիստական շինարարութեան արմատական գործօններից մէկը. յիշեալ միջոցների հետ միասին նա անհրաժեշտ է համարում արդիւնաբերական բանւորներին լայնօրէն և կտնոնաւորապէս զբաւել դէպի կոմմունիստական շինարարութիւն երկրագործութեան սահմաններում, գարգայնելով Խորհրդային Իշխանութեան ձեռքով հաստատւած համապետական «Բանւորական Նպաստող կոմիտէի» գործունէութիւնը և այլն:

Գիւղում կատարած գործի մէջ Ռ. Կ. Կ. առաջւայ նման յենուած է պրոլետարական և կիսապրոլետարական խաւերի վրայ. կազմակերպում է ամենից առաջ նրանց իբրև ինքնուրոյն ոյժ, ստեղծելով գիւղում կուսակցական քլիջներ, ազքատ գիւղացիների կազմակերպութիւններ, գիւղական պրոլետարների և կիսա-

պրոլետարների առաձին տիպի արկեստակցական միութիւններ և այլն, մտտեցնելով նրանց ամեն կերպ քաղաքի պրոլետարիատին, գուրս կորզելով նրանց գիւղական բուրժուազիայի և մանր սեփականատիրական շահերի ազդեցութիւնից:

Կուլակների և գիւղական բուրժուազիայի վերաբերմամբ Ռ. Կ. Կ. քաղաքականութիւնը կայանում է նրանց շահագործական ոտնձգութիւնների դէմ վճռական կռիւ մղելու, Խորհրդային քաղաքականութեան դէմ գիմադրութիւնը ճնշելու մէջ:

Միջին գիւղացութեան նկատմամբ Ռ. Կ. Կ. քաղաքականութիւնը կայանում է աստիճանաբար և կանոնաւոր կերպով նրան զբաւել դէպի սոցիալիստական շինարարութեան աշխատանք: Կուսակցութիւնը նպատակ է դնում անջատել նրան կուլակներից, զբաւել նրան բանւոր դասակարգի կողմը՝ լուրջ վերաբերմունք ցոյց տալով նրա կարիքներին, պայքարելով նրա յետամնացութեան դէմ դադախարական ազդեցութեան միջոցներով, ոչ երբէք ճնշման միջոցներով, բոլոր դէպքերում ձգտելով գործնական համաձայնութեան գալու նրա հետ, երբ նրա կենսական շահերին է վերաբերում խնդիրը. գիջումներ անելով նրան սոցիալիստական բարենորոգում

ներ մացնելու եղանակի որոշման մէջ:

Բաժխման ապարեզում

10. Մթերքների բաժանման գործում ձորերդային Իշխանութեան նպատակն է ներկայումս՝ համապետական մասշտաբով ժողխարինել առևտուրը մթերքների կանոնաւոր, կազմակերպւած բաժանումով: Նպատակն է ամբողջ աղգաբնակութիւնը կազմակերպել սպառողական կոմմունանների մի ընդհանուր ցանցի մէջ, ընդունակ ամենամեծ արագութեամբ, կանոնաւորութեամբ, անտեսելով և աշխատանքի ամենափոքր վասնումով բաժանել բոլոր անհրաժեշտ մթերքները, խտազոյնս կենտրոնացնելով բաժանողի դեր կատարող ամբողջ ապարատը:

Սպառողական կոմմունանների և նըրանց միութիւնների հիմքում դրւած պէտք է լինի այժմ գոյութիւն ունեցող համաքաղաքացիական և բանւորական կօօպերացիան, որ հանդիսանում է սպառողների ամենախոշոր կազմակերպութիւնը և կապիտալիզմի պատմութեամբ պատրաստւած մասսայական բաժանման ամենալաւ ապարատը:

Նման կօօպերատիւ ապարատի հետագայ կոմմունիստական պարզացումը համարելով սկզբունքորէն կատարելապէս ուղիղ, Թ. Կ. Կ. պէտք է

սխաեմատիկ կերպով շարունակէ իր քաղաքականութիւնը, այն է՝ պարտաւորացնի կուսակցութեան բոլոր անդամներին աշխատել կօօպերատիւներում, ուղղութիւն տալ նրանց, և արձեւտակցական միութիւնների՝ օգնութեամբ՝ կոմմունիստական ուղով՝ զարգացնի կօօպերատիւներում միացող աշխատաւոր ազգաբնակչութեան ինքնագործունէութիւնը և կարգապահութիւնը. աշխատի, որ ամբողջ աղգաբնակչութիւնը ընդգրկւած լինի կօօպերատիւներում և որ նրանք ձուլեն վերևից ներքև մի ընդհանուր՝ ամբողջ ձորերդային Հանրապետութիւնը ընդգրկող՝ կօօպերատիւի մէջ վերջապէս, որ ամենազխաւորն է, պրոլետարիատի գերակշռող ազգեցութիւնը աշխատաւորների միւս խաւերի վրայ լինի մշտապէս ապահովւած, որպէսզի գործնական կեանքում ամենուրեք զգացել գործադրւած տարբեր միջոցների էութիւնը, մանր բորժուական հիմ, կապիտալիստական տիպի կօօպերատիւներից սպառողական կոմմունաններին անցնելու գործը թեթևացնելու և իրականացրնելու համար, — կոմմունաններին, որոնք ղեկավարւելու են պրոլետարների և կիսապրոլետարների ձեռքով:

Իրանական եւ բանկային գործի աս-
պարեզում

17. Յուսափելով Պարիզի կոմմունա-
յի սխալներից, Սորբրդային իշխանու-
թիւնը Ռուսաստանում միանգամից
ձեռք ձգեց պետական բանկը, ապա
անցաւ մասնաւոր առեւտրական բան-
կերի ազգայնացմանը, պետականաց-
մանը. ձեռք զարկեց այդ բանկերի, խը-
նայողական գանձարանների և գան-
ձատների միացմանը պետական բան-
կի հետ, սանդղեղով այդպիսով Սորբր-
դային Հանրապետութեան մի ամբողջ
ժողովրդական Բանկի կմախքը, դարձ-
նելով բանկը Ֆինանսական կապիտալի
անտեսական տիրապետութեան կեն-
տրոնից և շահագործողների քաղա-
քական տիրապետութեան գործիք՝
գործիք բանւորական իշխանութեան
և լծակ տնտեսական յեղաշրջման:
Նպատակ դնելով Սորբրդային իշխա-
նութեան սկսած գործը հետևողակա-
նորէն հասցնելու իր վախճանին, Ռ.
Կ. Կ. առաջ է մղում հետևեալ սկզբունք-
ները.

ա) Բանկային ամբողջ գործը մե-
նաշնորհ դարձնել Սորբրդային պե-
տութեան ձեռքին.

բ) Բանկային գործառնութիւն-
ների արժատական փոփոխումն և
պարզումն, բանկային ապարաօր

դարձնելով աօրաբառ միակերպ հաշ-
ւետեսութեան և Սորբրդային Հանրա-
պետութեան ընդհանուր հաշւապա-
հութեան: Հասարակական տնտեսու-
թեան համաշափ կազմակերպումը
հետզհետէ հասցնելու է բանկի ոչնչաց-
ման գաղափարին՝ վերջիվերջոյ դարձ-
նելով այն, այսինքն բանկը կոմմուն-
իստական հասարակութեան կենտրո-
նական հաշւապահական հիմնարկու-
թիւն:

Կապիտալիզմից կոմմունիզմին անց-
նելու առաջին շրջանում, քանի ղեկ
կազմակերպւած չէ լիովին կոմմուն-
իստական արտապրութիւնը և մթերք-
ների բաժանումը, դրամի ոչնչացումը
անհնարին պիտի համարել, Այդ պայ-
մաններում ազգաբնակչութեան բուր-
ժուական ատրքերը շարունակում են
հարկաւ օգտագործել մասնաւոր ձեռ-
քերում քնացած դրամները սպեկու-
լիացիայի, շահի և աշխատաւորներին
կողմնակալութեան նպատակով: Յնկելով
բանկերի ազգայնացման—պետակա-
նացման վրայ, Ռ. Կ. Կ. ձգտում է
իրականացնել մի շարք միջոցներ,
որոնք լայնացնեն առանց դրամի
հաշիւ տեսնելու սահմանները և նա-
խապատրաստեն նրա ոչնչացումը.
օրինակ, պարտադիր կերպով պահել
դրամը ժողովրդական բանկում և բիւ-
ջնային տնտրակներ մտցնել. դրամը

փոխարինել փոխանակագիրներով-չեկէրով և կարճ պայմանաժամով տրւած տոմսերով, որոնք տալիս են մթերքներ ստանալու իրաւունք:

Ֆինանսական ասպարեզում

18. Կապիտալիստներէց էքսպորտըրիացիայի ենթարկւած արտադրութեան միջոցների համայնացման-հասարականացման սկզբնական շրջանում, պետական իշխանութիւնը դադարում է լինել պարագիտային մի ապարատ, ցցւած արտադրական պրոցեսի մարմնի վրայ. նա սկսում է փոխել մի կազմակերպութեան, որ անմիջական կերպով կատարում է երկրի անտեսութիւնը կառավարողի պաշտօն, ուստի նոյն չափով էլ պետական բիւջէն դառնում է ժողովրդական ամբողջ անտեսութեան բիւջէն:

Այդ պայմաններում մուտքի և ելքի հաւասարակշռութիւնը հնարաւոր է իրագործել բացառապէս կանոնաւոր հողի վրայ գնելով պետական համաչափ արտադրութիւնն ու մթերքների բաժանումը: Ինչ վերաբերում է պետական անմիջական ծախսերը ծածկելուն փոխանցման ներկայ շրջանում, Ֆ. Կ. Կ. պիտի պաշտպանի կապիտալիստներից կոնտրիբուցիա վերցնելու սխառմից եկամուտային և կալւածային պրոպրետիւ սուրբին անցնելը:

վերոյիշեալ կոնտրիբուցիայի սխառմը պատմականօրէն անհրաժեշտ և օրինական է սոցիալիստական յեղափոխութեան առաջին շրջանում: Իսկ որ չափով այդ սուրբը ինքը վախճան է ստանալու ունեւոր զստակարգի էքսպորտըրիացիայի լայն կիրառումով, այն չափով պետական ծախսերը պիտի ծածկեն պետական զանազան մեքանիզմներից ստացւած եկամուտների մի մասով՝ վերածելով այն պետական եկամուտի:

Բնակարանային հարցի ասպարեզում

19. Զգուելով լուծել մանաւանդ պատերազմի շրջանում սուր կերպարանք ստացած, բնակարանային հարցը, Խորհրդային Իշխանութիւնը բռնադրաւեց, լիովին էքսպորտըրիացիայի ենթարկեց կապիտալիստական անատէրերի բոլոր աները և յանձնեց նրանց քաղաքային Խորհուրդներին. բազմաթիւ բանւորների քաղաքի ծայրերից մասսայօրէն փոխադրեց և տեղաւորեց բուրժուական աների մէջ. լաւագոյնները շէնքերից յանձնեց բանւորական կազմակերպութիւններին, այդ շէնքերի ծախսը վերցնելով պետութեան վրայ. ձեռք զարկեց բանւորների ընտանիքներին կահաւորումով ապահովելու գործին և այլն:

Ռ. Կ. Կ. նպատակն է ընթանալու վերոյիշիալ ուղիով, երբէք չդիպչելով ոչ-կապիտալիստական տնտեսիքի շահերին, ամբողջ ոյժով ձգտել բարեկաւելու հին բնակարանների հակառոշապահական ու կուտակման պայմանները, ոչնչացնել անպէտք բնակարանները, վերանորոգել հները, կառուցանել նորերը, որոնք համապատասխան լինեն բանւորական մասսաների կեանքի նորագոյն պահանջներին, աշխատաւորներին բնակեցնելու գործք խելացի հիմունքների վրայ դնելով:

Աւստրալիայի պաշտպանութեան և սոցիալական ապահովութեան ապարեգում

Պրուկտարիատի գիլիատտուրայի հաստատումով, առաջին անգամ հնարաւորութիւն ստեղծւեց լիակատար ձևով իրագործելու սոցիալիստական կուտակցութիւնների ծրագիր-միութիւններ աշխատանքի ապահովութեան ապարեգում:

Մորեդդային Իշխանութիւնը օրէնսդրական ճանապարհով անցկացրեց և «Աշխատանքի Օրէնագրութեամբ» հաստատեց հետևեալը. — 8 ժամեայ բանւորական օր բոլոր աշխատաւորների համար, որպէս բանւորական մաքսիմալ օր, ըստ որում սակաւին 18 տարեկան հասակ չունեցողների և ար-

տաղրութեան վնասակար ճիւղերում աշխատողների, այլև ստորերկրեայ աշխատանք կատարող հանքային բանւորների բանւորական օր 6 ժամից ոչ աւելի. 42 ժամեայ շաբաթական անընդհատ հանգստութիւն բոլոր աշխատաւորների համար, արգելումն պայմանաժամից դուրս աշխատանքի, իբրև ընդհանուր կանոն. արգելումն օգտակու երեխաների, անչափահասների աշխատանքով մինչև 16 տարեկան հասակը, արգելումն գիշերայ աշխատանքի և առանձնապէս վնասակար ճիւղերի, արգելումն նոյնպէս և պայմանաժամից դուրս աշխատանքի թէ բոլոր կանանց և թէ 18 տարին չլրացած պատանիների համար, ազատումն աշխատանքից կանանց՝ ծննդաբերութիւնից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ յետոյ, հասցնելով ընդմիջ բժշկական և դեղերով ձրի օգնութիւն, տալով բանւորուհիներին ամեն մի երեք ժամը մանկան կերակրելու համար առնուազն կէս ժամ ժամանակ, իսկ կերակրող մայրերին՝ լրացուցիչ նպաստ. հիմնումն աշխատանքի ինսպեկցիայի և առողջապահութեան ինսպեկցիայի, որպիսիք պիտի ընտրեն արհեստակցական միութիւնների կողմից:

Մորեդդային Իշխանութիւնը օրէնսդրական կարգով անցկացրել է սոցիալական լիակատար ապահովութիւն ու-

բիշի աշխատանքը չշահագործող բոլոր աշխատաւորներին համար ապահովութիւն թէ ամեն ձևի աշխատընդունակութիւնը կորցնելուց և թէ— առաջին անգամ ամբողջ աշխարհում— զործադրկութիւնից, այդ ամենը հարկաւ ի հաշիւ վարձողների և պետութեան, ապահովողների կատարեալ ինքնավարութեամբ և արհեստակցական միութիւնների լայն մասնակցութեամբ:

Ինչ աւելին: Խորհրդային իշխանութիւնը որոշ դէպքերում աւելի առաջ է անցնել մինիմում-ծրագրից և հաստատել է նոյն «Աշխատանքի Օրէնագրքում» բանւորական կազմակերպութիւնների մասնակցութիւնը վարձելու և արձակելու հարցերի լուծման մէջ. մի ամուսյ արձակուրդ՝ վարձատրութիւնը պահպանելու իրաւունքով այն բոլոր աշխատաւորներին համար, որոնք անընդհատ աշխատել են մի տարուց ոչ պակաս. աշխատանքի վարձի պետական կանոնաւորումն սակազնի հիման վրայ, արհեստակցական միութիւնների ձեռքով մշակւած. որոշ օրգաններ, այն է՝ դասաւորող բաժանմունքներ և բանւոր ոյժերի հաշւառութիւնը խորհուրդներին և արհեստակցական միութիւններին կից, որոնք պարտաւոր են գործազուրկ բանւորներին աշխատանք տալ:

Սակայն պատերազմից առաջացած

ծայրայեղ քայքայումը և համաշխարհային իմպերիալիզմի գրոհը հարկադրեցին Խորհրդային Իշխանութեանը անել հետեւեալ շեղումը. բացառիկ դէպքերում թոյլտարել պայմանաժամից դուրս աշխատանքներ, սանձանափակելով նրանց թիւը 50-ով տարւայ ընթացքում. թոյլտարել 14-ից մինչև 16 տարեկան անշափահասներին աշխատել օրական 4 ժամ. ժամանակաւորապէս արձակուրդը մի ամսից կրճատել մինչև 2 շաբաթ. դիշխուայ աշխատանքը երկարել մինչև 7 ժամ:

Ռ. Կ. Կ. պէտք է լայն պրոպագանդ մղէ աշխատաւորներին ակտիւ մասնակցութեան հրաւիրելու՝ աշխատանքի պաշտպանութեան համար եռանդով գործադրելիք բոլոր միջոցների համար, որի համար անհրաժեշտ է.

ա) Ուժեղացնել աշխատանքի ինպակցիայի կազմակերպութիւնը և լայնացման գործը, ընտրելով ու պարաստելով այդ նպատակով ակտիւ գործիչների բանւորների շրջանից, տարածելով այն նաև մանր և տնային արդիւնարեութեան վրայ:

բ) Աշխատանքի պաշտպանութիւնը տարածել աշխատանքի բոլոր ձևերի վրայ (շէնքերի վրայ աշխատող բանւորներին, ցամաքային-ջրային տրանսպորտի, տնային ծառաների և գիւղատնտեսական բանւորների):

դ) Վերջնականապէս ազատել աշխատանքից փոքրահասակներին և իրականացնել անչափահաս պատանիների ժամերի հետագայ կրճատումը: Բացի այս Ռ. Կ. Կ. իրան նպատակ պիտի դնէ հետևելու:

ա) Հետադաշում, երբ աշխատանքի ընդհանուր արդիւնաւէտութիւնը, արտադրողականութիւնը կը բարձրանայ, այն ժամանակ բանւորական մաքսիմալ օրը վեցժամեայ զարձնել և վարձատրութեան չափը թողնել նոյնը այն պայմանով սակայն, որ աշխատուորները պարտաւոր լինեն այդ երկու ժամը առանց վարձատրութեան գործադրել ծանօթանալու համար արհեստի և արտադրութեան տեսութեանը, այլև պետութիւնը կտուժարելու տեխնիկան և զինւորական արհեստը գործնականօրէն իւրացնելու համար:

բ) Աշխատանքի արտադրողականութեան, արդիւնաւէտութեան բարձրացման համար մտցնել իրախուսական վարձատրողական սխեմա:

Սոցիալական ապահովութեան խնդրում Ռ. Կ. Կ. ձգտում է հազմակերպել պետական լայն օգնութիւն ոչ միայն պատերազմի և տարերային աղէտների դեռերի համար, այլև նասարակական աննորմալ յարաբերութիւնների դեռերին, միեւնոյն ժամանակ մղում է վճռական պայքար ամեն տե-

սակ պարագիտիզմի և պարտաբուժութեան դէմ, նպատակ է դնում կրկին սոցիալական ասպարէզը մտցնելու աշխատանքի ճանապարհից շեղած իւրաքանչիւր բանւորի:

Փոյլովրդական առողջութեան պաշտպանութեան ասպարէզում

21. Փողովրդական առողջութեան պաշտպանութեան ասպարէզում Ռ. Կ. Կ. իր գործունէութեան հիմքն է համարում՝ ամենից առաջ իրականացնել մի շարք առողջապահական և առողջացման լայն միջոցներ հիւանդութիւնների գարգացման առաջն տունելու համար: Պրոլետարիատի զիկտատուրան արդէն հնարաւորութիւն աւելց իրականացնելու առողջացման ու բժշկական մի շարք միջոցներ, որոնք անիրազործելի էին բուրժուական հասարակութեան շրջանակում. ինչպէս, օրինակ զեղատների, մանաւոր խոշոր բուժիչ հաստատութիւնների, կուրորտների ազգայնացումը — պետականացումը, բժշկական բանւորական ոչժերի պարտապիր ծառայութիւնը և այլն:

Համապատասխան կերպով Ռ. Կ. Կ. իր մօտաւոր նպատակն է համարում.

ա) Վճռական իրականացում առողջապահական լայն միջոցների յանուն աշխատուորների շահերի, ինչպէս, օրինակ.

I) Բնակեցրած վայրերի առողջա-
ցուծը (հողի, ջրի և օդի պաշտպա-
նութիւն)։

II) Հասարակական սննդաութիւնը
գիտական-առողջապահական հիմունք-
ների վրայ դնելը։

III) Վարակիչ հիւանդութիւնների
տարածումն ու զարգացումն կանխող
միջոցների կազմակերպումը։

IV) Սանիտարական օրէնքները հրա-
տարակումը։

բ) Սոցիալական ախտերի դէմ կռիւ
(Թորախտի, վիճերական ախտերի,
ալիօօլիզմի և այլն)։

դ) Ապահովումն հանրամատչելի, ձրի
և մասնագիտական բուժարանական և
գեղային օգնութեան։



« Ազգային գրադարան »



NL0186142

44